# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Կարմիր խնձոր քիսացու,
Միպտակ կովը մնացու,
Տիւ էս իմ հօր հարմնացու,
Ես քու հօրը փեսացու:

Գետին էն ղօլը [1] քարքարոտ,
Քամման շալը ծըլծալոտ,
Աղջիկ կայնի մէկ պաչեմ
Ձեր օրթերը [2] տանեմ արօտ:

Մին ջաղաց էրկու ղոնի,
Փէարց [3] ղրէք նարս թիկնի,
Ես ղուն մին բաղում պիտինք,
Ես չինարն, դու նոնի:

Արեւը կամար, կամար,
Կապել ես ոսկա քամար,
Ցիլթուն օր պաս էմ պահէ
Իմ նարի ճամկի համար:

Մտալ էմ գետը խոր ա,
Վոսկայ [4] հալանին [5] նոր ա,
Ա՜յ նանի, մին ալ [6] կարի,
Վոսկի կոճակնի [7] շարի։

Ճաղացի տիւռնը տարթ ա,
Կտորը լիքը մարթ ա,
Նարս պաղան ա [1] կէալի,
Նայլուխը լիքը վարդ ա:

Ճաղացին տիւռնը տաշած ա,
Նայլուխը գիւլ քաշած ա,
Մեռնիմ թոխ թոխ ունքերիտ,
Հէնց ղալամա քաշած ա:

Գետ ա գալի լոք տալա,
Կարմիր խնձոր ծափ տալա,
Հրէս եկաւ իմ նարը,
Գէօզ ծին տակին լոք տալա:

Քինացել էս, եկալ էս,
Վռնները ցեխումը պուկալ էս,
Յնելքիտ ղուրպան ա՛յ տղայ,
Դէօստ[2])ու դիւշման[3]) ջոկալ էս:

Հալիս կտրին ցիլ [4]) ունիմ,
Ձալ ապրեշում [5]) թիլ ունիմ,
Ջահիլ ճիվան [6]) սըրկաւագ
Ես քեզանից՝ մէյլ [7]) ունիմ:

---

[1]) Կողմը. [2]) Հորթերը.
[3]) Բարձը.
[4]) Ոսկեայ. [5]) Հանդերձ. [6]) Կարմրաւոյն չոր. [7]) Կոճակներ.

[1]) Այգուց.
[2]) Բարեկամ. [3]) Թշնամի.
[4]) Վարած արտ.
[5]) Մետաքս. [6]) Նորատի. [7]) Ցոյս.

Սարին խոտը ծեղ, ծեղ,
Ախպէր զնանք մին տեղ.
Վոր կէօղերը վրայ տան,
Գլուխս դնեմ գլխիտ տեղ:

Էկ ք քինանք էն օխը,
Գիւղպուտաղին կիլոխը,
Ամէն ծառան [1]) մին փշատ
Իմ եարին էօմրը [2]) շատ:

Էն սարին քեղ ա բուսայ,
Իմ եարին բեխ ա բուսալ.
Խապար տարէք իմ նանում,
Դիլակը տեղ ա հասալ [3]):

Ճաղացիս մէջը մարդ ա,
Կտուրը լիքը տարթ ա,
Հրէս էկաւ իմ եարը,
Գէօտիկը լիքը վարդ ա:

Մեր տանը տակը նուշ էր,
Իմ եարը թաղլան ղուշ էր,
Ապէր խատրըտ չմնայ՝
Ծարս քանց քեզ անուշ էր:

Վոչխարն էլալ ա դիզը,
Ջոկեցէք ալազեօզը,
Իմ հէր քեզ աղջիկ չի տայ,
Սրքի էրեսիտ թօզը:

1) Ծառից.
2) Կեանքը.
3) Ուխտը կատարուել է.

Ա՜յ հար արա, հար արա,
Ոսկէ քեանքիւլտ եր արա.
Իմ հէր քեզ աղջիկ չի տալ՝
Գլխիտ վախտին ճար արա.

Շողքը ընկից մեր պատին,
Արքայութիւն իմ տատին,
Վոգիտ [1]) էրվի ա՛յ տատի,
Ինծ խփ տվար չոլախի:

Կանգնել ես կանչըմ ա չես,
Փօյիցտ ամաչըմ ա չես,
Եկայ կշտովտ անց կացայ,
Տէր էս ճնաչըմ ալ չես:

Իմ գիւլումը [2]) քաղած ա,
Պանծր սարին կէաղած [3]) ա,
Հով [4]) վեր [5]) իմ գիւլումիս
տեղն ասի,
Հէրը, ախպէրը թաղած ա:

Քաղքի քարը քէահրըպար,
Իմ բոյ քու բոյ բարաբար,
Խնծոր քցեմ եկ տար,
Դու ալ ղառար բէհըըբար [6]):

Ախպէր ունիմ սարմն ա,
Ծվին կէօտկի ծալմն ա,
Ախպէր քու շվիտ ածա,
Քիւրըտ Լորուայ քոլումն ա:

1) Հոգիդ.
2) Փունջ. 3) Թաղցրած, կեղած.
4) Ով. 5) Որ.
6) Դրժող.

Ես մին կանանչ խիար էմ,
Իմ եարին ըխտիարին էմ,
Կաղնալ էս մին եա եշի,
Տես հինչ մազալլու եար էմ:

Էյվանն ցան էմ ածալ,
Պոյաս մին էմ ածալ.
Եար ասացի, եար չըեցի [1])
Եանմճի ման էմ ածալ:

Ղուշը ծկըլտայ բաղումը,
Կանանչ խիարը [2]) թաղումը,
Ես մին սարքած սուրատ[3]) պտի,
Իմ եարին օթախումը [4]):

Մընէնց նիեր [5]) հանդերը,
Թազա արծաթի բէանդերը [6]),
Դանակ պտի սիրտս ճղենք,
Բուղում բուղում[7]) դէարտերը[8])

Թխալալ ա թոր չի կէալի,
Մ՛թնել ա տուն չի կէալի,
Տեղ էմ ցկալ պէարց դրալ,
Աչքերս քուն չի կէալի:

Քոլը քոլին թուշումը [9]),
Ծեռնը[10]) պիժան[11]) կիւշումը[12])
Իմ եարին ըշտեղ տեսար,
Շուշուայ ղալին թուշումը:

1) Ճարեցի։ 2) Վարունգ։ 3) Պատկեր, Թուրքերէն։ 4) Սենեկում։
5) Այսպէս ընկած։ 6) Օղակ։
7) Շարք-շարք։ 8) Վշտերը։
9) Անկիւնում։ 10) Ձեռքը։ 11) Գլուխ քսելու մածուն։ 12) Գուշ։

Ծրատալ էմ ճիւր [1]) ափըէք,
Ըսպահանու հում ափըէք,
Կը մեռնիմ էս ղարիպ տեղը,
Ղարիպ ղուշս տիս ափըէք:

Տանս տակը աղ մըշի,
Օխտը տարի եար եշի [2]),
Ա ջամհատըստհենց պան կըլնի՝
Եարն ալ կը տա՛ն ուրիշի:

Քամին կանի բոքին [3]) տանի,
Վոչխարը թոքին կանի [4])
Սիրի սիրան հանողը,
Հոգին ստանան տանի:

Ջրի վրան սազ պըտի,
Իմ էօրղանս ղազ պտի,
Հընչիս ա պէտքը բէակի տղան,
Իմ եարս նախշոմն պըտի:

Տանս տակը շլորի,
Ճղները եա հլորի [5]),
Հըրենակ [6]) էն քըտըրը,
Օխտն ախպօր թագ կը հլորի:

Հորի ծառին եար չըլիլ,
Առանց քէօլկայ եար չըլիլ,
Ա հէր, ա՛ մէր խօսալ մէք,
Խառնուած սրտին ճար չըլիլ:

1) Ջուր։
2) Նայլի։
3) Պեխի։
4) Հեւում է։
5) Ոլորի։ 6) Երանի։

Կորաւա քէօչ ա քինում,
Քէօչ քէօչի մէջ ա քինում,
Հըրենակ էն քըւորը՝
Օխտն ախպօր մէջ ա քինում։

Սարերին թոխպը պըտի,
Որերին [1]) կոխպը [2]) պըտի,
Կիր [3]) կիրող [4]) ղալամ [5]) ածող
Ծնկանտ թոխտը պտի։

Թամքը թամքին վրայ,
Խըղունիկը (աղամին) վանքին
վրայ,
Իմ ախպօր ըշտե տեսար
Թագաւորին թախտին վրայ։

Ես էն ճարին ճար պիտի,
Կոտկումը խիար պիտի,
Էն ճարի շոքած տեղը՝
Մ'ին չինարի ծառ պիտի։

Աղչի քնանք մեր բաղը,
Պոկենք շամամի թաղը,
Քու էրէսիտ վարաղը՝
Հանել ա սրտիս դաղը։

Ոչխարն էլաւ էն դիւզը,
Եր ելաւ վոննի թօզը,
Եար քու քթակտ վերկալ,
Թափ տամ քեանքիւլիտ թօզը։

Մ'թնալ ա մթնաճանանչ.
Ջեւինջի քոլը կանանչ,
Հրէս եկը իմ եարը,
Բեղերը առնակալած։

Ծուն ըլնեմ վիրան խաշեմ,
Եփ իլեմ կտորը եշեմ.
Տեսնամ եարս գալիս ա,
Կռանամ չաքմէքը քաշեմ։

Այ հաւան էմ հաւան էմ,
Մեծ կարպետին խաւան [1]) էմ,
Էլ [2]) գիտայ ալամ [3]) գիտայ,
Ես էն եարին հաւան էմ։

Աղջիկ աղջիկ համ օնիս,
Զորս աւանի ծամ օնիս,
Քո հէր, քո մէր շատ ապրի,
Ինձ գալի դու կամ օնիս։

Ա՜յ եար պտի, եար պտի,
Սարին վրայ որթ [4]) պտի,
Իմ եարին բերանըմը
Մ'ին կտոր շաքար պտի։

Խնձոր օնիմ կծած ա,
Մաջը օսկով լցած ա,
Ախպէրս օզեց տուի ոչ,
Էազիզ եարիս պաղշած ա։

---

[1]) Հոր, [2]) Հորի պատերը կալնող ծղոտ, որ պաշտպանում է ցորենը. [3]) Գիր. [4]) Գրող. [5]) Գրիչ.

[1]) Խաւից. [2]) Օտար.
[3]) Բոլորը.
[4]) Հորթ.

*Տանս տակին կայ նոնի,*
*Պէտոց պնրաք նարս կոնի,*
*Ես տիւ մին պէ՛աղում պտինք*
*Ես չինարի, տիւ նոնի:*

*Աղջի անըմըտ Խանի,*
*Լեչակտ քամին տանի,*
*Ես տի՛ւ մին պաղում պտինք,*
*Իմ՛ հէր քի՛ւ հէր խնամի:*

*Քնացել էս օրաւ եկ,*
*Եաղլաղտ խիարաւ եկ,*
*Մեր տիւռնը ղալմաղալ ա,*
*Շօռ տօ՛ աղըըրաւ եկ:*

*Ախպէր հանաքիտ ղուրբան,*
*Ծուխտ ճուխտ ղանակիտ ղուր-*
*բան,*
*Փափախտ նան [1]) ես տիրալ,*
*Արած դիւանիտ [2]) ղուրբան:*

*Վարթաւորը գալիս ա,*
*Ծաղիկս հեճելիս ա,*
*Վարթեւորայ սու [3]) աղջիկ,*
*Մէաստ ծլվըլալիս ա:*

*Աղչի աղչի դէտ քնայ,*
*Առաջքաւտ ետ քնայ.*
*Խուտահատին [4]) քամին փչի,*
*Դիւլզազ [5]) շալտ ետ քնայ:*

1) Կողքի. 2) Դատաստան.
3) Ջուր.
4) Ուխտատեղի, Խնձորեկ գիւղի մօտ. 5) Մահուղէ.

*Նարս նստած է գերանին,*
*Հարչու շուին բերանին,*
*Օսկի ղայթան եմ՛ գործում,*
*Դնեմ՛ Ջիքին բերանին։*

*Հաց կը թխեմ՛ կէարի [1]) ա,*
*Նարս ալ սափարի [2]) ա,*
*Սափար քինալիտ մատաղ,*
*Խօսքերըտ շաքարի ա:*

*Իրիկուն մթին ա,*
*Տաւարը չոր թըքին ա,*
*Հրէս եկն էն նարը,*
*Ձեռքը պիւլիւր [3]) մըքին ա:*

*Ճղացիս տիւռնը տաշած,*
*Եաղըխիս եօլը քաշած,*
*Կեռ կեռ ունքերիտ մատաղ,*
*Ղասիտ ղլամաւ քաշած:*

*Սարին էն ղոլը ձիւն է,*
*Էս ղոլս հաւքի բուն է,*
*Հրէս եկն իմ՛ նարը՝*
*Շելակը թաւ թաւ հիւն է:*

*Հովտը սարին նման ա,*
*Տեսնանք իմ՛ նարը տանն ա,*
*Իմ՛ նարին մին քեանքիւլ ունի՝*
*Օսկի թելին նման ա:*

1) Գարի.
2) Ճանապարհորդ.
3) Շուրջ.

*Ախպէր անուն՝ Ուռուշան,*
*Սեպտակ կօլիտ թոխ նշան,*
*Ծաղլախտ ղարկի անեմ,*
*Պահեմ քո եարիտ նշան:*

*Թոռ կը զայ արեւ կանի,*
*Նիշանպահ տերեւ կանի,*
*Քուրն ախպօրը մատաղ,*
*Ճըղաթաթաղ վար կանի:*

*Զարտախին թան եմ ածալ,*
*Բոյաւըտ մին եմ ածալ,*
*Խափալ եմ թա քն եմ զալու*
*Ծաղլախըտ փոլ եմ ածալ:*

*Հաց կը թխեմ եուխայ ա,*
*Եարիս կէցը [1]) չուխայ ա,*
*Իմ եարը ինձ հունց կը թակի;*
*Ինքը մին մեծ խոխայ ա.*

*Ես մին կանանչ խիար եմ,*
*Քու սրտիտ իխտիար եմ,*
*Գնա՛ զնա եա նշի,*
*Ես մին ամանաթ եար եմ:*

*Մ՛ին եար ծնիմ օվչի է,*
*Մ՛էջքը բարակ ղամշի է,*
*Ձեռնաւը բան չի եր զալ,*
*Լեզուաւը թալանչի է:*

---

[1]) Հագին.
[2]) Նոր.
[3]) Ընկոյզ.
[4]) Աղանդեր.

*Սարերի թարթանջուկ թէա-*
*զա [2]),*
*Ճաւուզ [3]), մեխակ քեզ մէազա[4])*
*Ինձպէս նազանի աղջիկ,*
*Քեզ պէս տղին հունց սազայ:*

*Ա՞յ աջ կռան ծախ կռան,*
*Կաքաւը սըռան թռան,*
*Ա՞յ քեաքլիկ պոչիկ տղայ,*
*Ես խի՞ էմ մոհիղ թռալ.*

*Սանդ կը թակեմ հախ ա,*
*Զմոշկը փոտնիս լախ ա,*
*Ա տղայ շատ մի խօսայ,*
*Զալ մուկը ըէխատ կախ ա:*

*Ա՛ տղայ քինա կալը տես,*
*Ցորտ աղըրի սալը տես,*
*Կատոն քեօշկա [5]) էմ քթալ,*
*Խփէն վեր կալ համը տես:*

*Կաղնալ էս կտրիս միջին,*
*Քաքուլտ թաքնիս միջին,*
*Թէ ինձ օզես եա վազես,*
*Գիւլլան [6], տայ սրտիտ միջին:*

*Գլօխս թութուն ղէմ կը տամ,*
*Թութուն շէվերը եր կը տամ,*
*Հով վէր սէրը սիրածան հանի*
*Սրտին քարփաթուն [7]) եր կը*
*տամ:*

---

[5]) Կերակուր.
[6]) Գնդակ.
[7]) Աքցան.

*Ա՜յ հատար հատար ինեմ,*
*Վրցակի [1] կատար ինեմ,*
*Թէ ինձ օգնես եռ վազեմ,*
*Ինքո ճուլթ ու պատառ ինեմ։*

*Այ տղայ տվարած տղայ,*
*Կոճակնին շարած տղայ,*
*Իմ հէր քեզ աղջիկ չի տալ*
*Սիրտը խշարած տղայ:*

*Յսաղ կասեմ խաղիս գլխին,*
*Իմ հէրանց պէաղին [2]) գլխին,*
*Քաշալն [3]) իրան տեղ կանի,*
*Վողը [4]) տամ կաղին գլխին:*

*Աղջի աղջի համ օնես,*
*Ճրիկ ճրիկ [5]) ծամ օնես,*
*Քո մօր աչքերը վեր դառնայ*
*Թէ ինձ կեալի կամ օնես:*

*Բոստանս բաղ ա դառալ,*
*Յոընարս թաղ ա դառալ,*
*Իմ եարը մին խօսք ա ասալ,*
*Սրտումս տաղ ա տառալ:*

*Սարերին թերթիփ ծունը,*
*Բաղերին ավլան հունը,*
*Իմ եարս մին խօսք ասեց,*
*Կոտրեց սրտիս սիւնը:*

*Հանդեր ա հա՜ հանդեր ա,*
*Զիմ արծաթի քանտեր ա,*
*Դանակ բերէք սիրտ ճղէնք,*
*Էս ինչ բռում դարդեր ա:*

*Գետնը եր[1]) կարմինջ եմ քցալ,*
*Մ՚ընը մէջ վարթեր եմ լցալ,*
*Յսաբար տարէք իմ եարին,*
*Զիմ [2]) իրան դարտէրն եմ լցալ:*

*Մ՚եր տան տակը վար կանեմ,*
*Զալ քշեղակին քար կանեմ,*
*Վեր իմ սիրածին ինձ տան,*
*Գելուլթիւս [3]) թարգ կանեմ:*

*Ճղացին տխտնը կանանչ,*
*Տիս կուզամ համանչ ամանչ,*
*Յսօրասան եաիր պտի,*
*Իմ սիրածի նշանած:*

*Ոշըմ եմ երեւում չի,*
*Ծառերա տերեւում չի,*
*Աչքերս ման եմ ածում,*
*Էն եարը երեւում չի:*

*Մ՚թնել ա տօն չի գալիս,*
*Թխալել ա թոռ չի գալիս,*
*Տեղ եմ գկալ, պէարծ դրալ՝*
*Աչքերիս քին չի գալիս։*

*Իմ ծաղիկս քաղած ա,*
*Բարձր սարին կէաղած ա,*
*Ծաղկիս եռան մին լի՛ս կէայ*
*Դիւշմանին աչքը տիս կէայ:*

[1]) Աքաղաղ.
[2]) Այգի, [3]) Ճաղատ. [4]) Հողը.
[5]) Ջրոտ.

[1]) Վերալ. [2]) Բոլոր.
[3]) Գժութիւն.

*Գնացի ճուրը [1]) ճրագով,*
*Մէջքիս տվին ուրաքով,*
*Իմ հօր իմ մօր ինչ ասեմ,*
*Ինձ խե տուին կրակով:*

*Հինչ անեմ հնչիս ղարտայ,*
*Կտրան սազիս փարդայ,*
*Աշղ չի աշղ ղառայ,*
*Ծարալու եարիս դարդայ:*

*Տողքը տուաւ էն պատին,*
*Մէջքը կոտրի իմ տատին,*
*Հարուստ տեղը տեղ թողեց՝*
*Ինձ տուեց էս աղքատին:*

*Բոխչայ բաճար էմ կապալ,*
*Աղ ու փճար էմ կապալ,*
*Ես էն եարին հաւան չեմ,*
*Օժաւ վրայ էն կապալ:*

*Ա տղայ տվարած տղայ,*
*Կճուկնէն [2]) չարած տղայ,*
*Իմ հար քե աղջիկ չի տալ*
*Սիրտը խշարած [3]) տղայ:*

*Սիպտակ ծիլին ջուր կը տամ,*
*Ղալեանին թութուն կը տամ,*
*Ամէն ·մի եարս միտս կեալայ,*
*Սրտիս քեալփաթուն կոտամ:*

*Զափարի պաստա կոխիլ մի,*
*Ծահին ղալպ ա, փոխիլ մի,*

[1]) Ջուրը.
[2]) Կոճակները. [3]) Մաշուած.

*Իմ հար քեզ աղջիկ չի տայ.*
*Քեօնկլին [1]) իմ ա, վախիլ մի:*

*Սարերը ծիւն կալալ ա,*
*Արեւ արալ հալալ ա,*
*Զալում Գեանջեցի աղջիկ,*
*Դարդերին ինձ կալալ ա:*

*Բոստանը ջրած տեղը,*
*Ամեղը թեղած տեղը,*
*Խաբար տարէք իմ եարին,*
*Հէն էմ իրան դրած տեղը:*

*Արեւը կծացալ ա,*
*Ղամերը քուշտացալ ա,*
*Խաբար տարէք իմ եարին,*
*Մուշտարիս շատացալ ա:*

*Իմ եարը հոր ա իլալ,*
*Սարերին քին ա իլալ,*
*Թոռ ա ոկալ թըշալ չի,*
*Ծափունչին շոռ ա իլալ:*

*Ես Կէօրիսի ծօրան եմ,*
*Մեծ բաղին խնձօրան եմ,*
*Խաբար տարէք իմ եարին*
*Օլքայ օլքայ կորալ եմ:*

*Կը կաղնեմ կէտին քարին,*
*Գիր կը գրեմ Նազլու եարին,*
*Հա՛մ կը գրեմ, համ կը ճնչեմ՝*
*Աղու կտրի ըստէնց տարին:*

[1]) Իրաւունք.

*Կը կաղնեմ՝ սոնա քարին,*
*Կը նշեմ Բաքվայ սարին,*
*Ա՜յ Բաքվայ խազայիններ,*
*Ողարկեցէք թէլլու նարին:*

*Գետն էմ ղրաղ կաշի,*
*Աչքս բազար կը եշի,*
*Ձերան [1]) իմ նարի կէալը,*
*Հալալ կէաս կը մաշի:*

*Ես Կէօրխսի ծորան էմ,*
*Մեծ պաղի խնձորան էմ,*
*Յաալար ըրաք էն նարին,*
*Էօլքա էօլքա կորալ էմ:*

*Մեծ արտումը ղուշ կընի*
*Ցորտ աղբուրին թուշ կընի,*
*Ծարը նարին տեսնալով,*
*Գիւլը աչըլմիշ կընի:*

*Կաքաւը սուլուլ կը տայ,*
*Կնճիթը տիւրուր կը տայ,*
*Հուր վոր մին նար չի ունի,*
*Օնքերը իւրուր կը տայ:*

*Նալն ու մեխը կրակումը,*
*Ալան ճոթը մկրատումը,*
*Սէրը սիրածան հանողին,*
*Թաքը թխոցի գրատումը:*

1) Մինչև:
2) Վերայ:
3) Հաւասար:

*Քարին երայ [2]) ղուշ պտի,*
*Ցուրտ աղբրին թուշ [3]) պտի,*
*Նար քի նարը կը տեսնայ,*
*Գիւլն [4]) աչըլմիշ [5]) կընի:*

*Արևը սարին երան,*
*Մըմուռնը քարին երան,*
*Մէն թեւաւոր ղուշ պտի,*
*Իմ սիրած նարին երան:*

*Քնացել ես եկալ ես,*
*Տրեխներտ կոկալ ես,*
*Ձեռիտ ճպատին մատաղ,*
*Գառնը մօրան ճօկալ ես:*

*Կաղնել էս բախայ բախայ,*
*Վռնեերիտ չմոշկը լախ [6]) ա,*
*Սեւ տղայ կարմիր աղջիկ,*
*Բընել էն ուրուր նախայ [7]):*

*Կայնալ ըս բախա, բախա,*
*Լնչակիտ տոտը կախ ա,*
*Սեւ տղայ գիւլգազ [8]) աղջիկ*
*Բռնալ ըն իւրուր եախա:*

*Աղջիկը քնաց կալաւը,*
*Փալղի տուաւ հալաւը,*
*Օձեց որ յետ եշի,*
*Նշանածն ընկաւ կոլաւը [9]):*

4) Վարդը: 5) Բացուած:
6) Թոյլ, լայն է: 7) Օձիք:
8) Գոյնզգոյն:
9) Կռնով:

Գիւլմ՛ զիւլմ՛ զիւլաստար [1],
Բուլղ կը մանեմ՛ հովասար [2],
Էս շէնումը էրկու հարս կայ,
Մ՚ինը քանց մինը եաս ա։

Էն եարը հո՞ր ա, տան չի,
Վարած արտը կնանչի,
Էն եարը մէն քիւր ունի,
Կընկնի սարերը կը կանչի։

[1]) Ծիծաղում ես։ [2]) Հաւասար։

